https://doi.org/10.59546/18290744-2025.7-9-86

ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ,
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս

GEVORG ISRAYELYAN
Candidate of Law, Associate Professor,
Head of the Scientific Research Center of Applied problems in criminology of
National Bureau of Expertises of National Academy of
Sciences of the Republic of Armenia,
Lecturer of the Department of Law at
Eurasia International University

ГЕВОРГ ИСРАЕЛЯН
кандидат юридических наук, доцент,
Начальник Научно-исследовательского центра прикладных проблем
криминологии Национального бюро экспертиз
Национальной академии наук Республики Армения,
преподаватель кафедры правоведения
Международного университета «Евразия»

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՕԲՅԵԿՏԻՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

CHARACTERISTICS AND CRIMINOLOGICAL SIGNIFICANCE OBJECTIVE SIGNS OF THE LEGAL STRUCTURE OF THE COMPUTER THEFT

ХАРАКТЕРИСТИКА И КРИМИНОЛОГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ОБЪЕКТИВНЫХ ПРИЗНАКОВ ЮРИДИЧЕСКОГО СОСТАВА КОМПЬЮТЕРНОГО ХИЩЕНИЯ

Ներածություն

Հայտնի է, որ իրավաբանական կազմը հանցանքի օրենսդրական կեցության ձևն է: Ուստի բոլոր հանցատեսակներին բնորոշ հակաիրավականության առաջնային քրեաբանա-

կան նշանակությունն օրենքի կանխարգելիչ ազդեցությունն է: Իրականության մեջ առանձին հանցատեսակների օբյեկտիվ հատկանիշների դրսևորման քրեաբանական նշանակությունը պայմանավորված է կանխարգելիչ միջոցառումների մարտավարության և առանձնահատկությունների որոշման հնարավորությամբ: Սա հատկապես վառ է արտահայտված համակարգչային հափշտակության պարագայում: Այն բնութագրվում է կատարման եղանակների, միջոցների և օբյեկտիվ այլ հատկանիշների առանձնահատկություններով, որոնցով տարբերվում է ոչ միայն հափշտակության մյուս տեսակներից, այլև համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից: Դա հնարավորություն է տալիս որոշելու համակարգչային հափշտակությունների կանխարգելիչ միջոցառումների բնույթը: Բացի դրանից՝ համակարգչային հափշտակության առանձին օբյեկտիվ հատկանիշներն իրենց դրսևորումն են գտնում քրեաբանական կոնկրետ իրադրություններում, որոնց իմացությունը հիմնարար նշանակություն ունի վերոհիշյալ հանցատեսակի կանխարգելման կազմակերպման գործում:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին արձանագրված համակարգչային հափշտակությունների բացասական քրեաբանական միտումների[1] հետ կապված արդյունավետ կանխարգելիչ միջոցների և մարտավարական հնարքների ընտրության անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակն է ներկայացնել համակարգչային հափշտակության իրավաբանական կազմի օբյեկտիվ հատկանիշների նկարագիրը և քրեաբանական նշանակությունը:

Հիմնական հետազոտություն

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սեփականության պաշտպանության իրավական միջոցներից է քրեաիրավական պաշտպանությունը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 30-րդ գլուխը նախատեսում է հափշտակությունների տեսակները, իսկ 31-րդ գլուխը՝ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունները:

Օրենսդիրը հանցավոր է ճանաչել համակարգչային հափշտակությունը՝ պատասխանատվություն սահմանելով Օրենսգրքի 257-րդ հոդվածով:

Նշված օրինադրույթի, ինչպես նաև Օրենսգրքի համապատասխան այլ կարգավորումների (օրինակ՝ Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետ և այլն) վերլուծության և մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում բացահայտել ենք համակարգչային հափշտակության իրավաբանական կազմի օբյեկտիվ տարրերը բնութագրող հետևյալ հատկանիշները և դրանց քրեաբանական նշանակությունը.

1. Համակարգչային հափշտակության օբյեկտը և առարկան.

Համակարգչային հափշտակության առարկան ուրիշի գույքն է: Հայտնի է՝ առարկան այն իրն է, որը հանդես է գալիս շարժական կամ անշարժ գույքի ձևով և գտնվում է մեկ այլ անձի սեփականության ֆոնդում: Ըստ այդմ, հափշտակության առարկա չեն կարող լինել.

[1] Տես Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, էջ 19 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf, Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում, էջեր 16-17 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf, Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի գործունեության մասին հաղորդում, էջեր 8, 16 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_293_4340020891.pdf (վերջին մուտք՝ 07.04.2025 թ.):

1) բնական վիճակում գտնվող առարկաները, եթե բնությունից չեն անջատվել մարդու աշխատանքով և ներառվել հասարակական կյանքի որևէ ոլորտում, օրինակ՝ տնտեսության,

2) ոչ նյութական բնույթի արժեքները, գիտական աշխատությունները և մտավոր սեփականության այլ օբյեկտները,

3) սեփականատիրոջ տիրապետությունից հանված կամ տիրազուրկ գույքը [2]:

Ելնելով այն հանգամանքից, որ քննարկվող հանցանքի առարկան ուրիշի գույքն է, համակարգչային հափշտակության օբյեկտը սեփականության պաշտպանության հասարակական հարաբերություններն են:

Ակնբախ է, որ հանցագործության օբյեկտը և առարկան դասվում են այն օբյեկտիվ հատկանիշների թվին, որոնցով համակարգչային հափշտակությունը տարբերվում է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից: Ուստի իրավական պաշտպանության տակ գտնվող հարաբերությունների բնույթով և հանցավոր ոտնձգության առարկայով է որոշվում հիշատակված հանցատեսակների կանխարգելիչ միջոցառումների տարբերակվածությունը:

2. Համակարգչային հափշտակությունը՝ որպես արարք.

Համակարգչային հափշտակությունը դրսևորվում է ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով:

Նշվածից ելնելով՝

1) Հանցավորը հափշտակությունը կարող է կատարել ինչպես հարստանալու, ինքնահաստատվելու[3], այնպես էլ մեկ այլ անձի, օրինակ՝ մերձավորին նվիրելու համար:

2) Հափշտակությունը կատարվում է ապօրինի՝ առանց իրավական հիմքի, և անհատույց՝ համարժեք գույքով, ծառայությամբ կամ այլ ձևով չհատուցելով: Հակառակ պարագայում հափշտակությունը բացակայում է: Օրինակ՝ գործատուն աշխատողին չի փոխանցել աշխատավարձը, և աշխատողը համակարգչային տեխնիկայի միջոցով տիրել է աշխատավարձի չափով գումարի[4]:

Իրավաբանական և քրեաբանական նշանակություն ունեն հանցագործության փուլերը: Մասնավորապես, կարևոր է հափշտակության ավարտման պահը, որով էլ որոշվում է՝ հանցանքն ավարտված է, թե ոչ:

Իրավաբանական նշանակությունը դրսևորվում է արարքի ճիշտ որակմամբ: Մասնավորապես, հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորը գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Հակառակ դեպքում, օրինակ՝ երբ հանցավորը տվյալը մուտքագրելու պահին բռնվել է, հափշտակությունն ավարտված չի կարող համարվել: Ուստի նման դեպքերում առկա է հանցափորձ:

Քրեաբանական նշանակությունը կայանում է նրանում, որ հանցավոր գործունեության տարբեր փուլերում կանխարգելիչ միջոցառումները պետք է իրականացվեն տարբերակված: Այսպես, հանցանքի նախապատրաստության փուլում կարող են արդյունավետ լինել համոզման, իսկ հանցափորձի փուլում՝ հարկադրանքի միջոցները: Շարունակվող հանցանքի պարագայում, երբ կատարվել է միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքների մի

[2] Տես Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). / Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 345-346:

[3] Տես *Шапошников А.А.,* Криминологическая характеристика личности киберпреступника // https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-kiberprestupnika-1/viewer (վերջին մուտք՝ 07.04.2025թ.):

[4] Տես *Իսրայելյան Գ. Վ.,* Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2023, հատոր 2, էջ 130:

մասը, մյուս մասերի կանխարգելման գործում կիրառելի են ինչպես համոզման, այնպես էլ հարկադրանքի միջոցները:

3. Համակարգչային հափշտակության կատարման եղանակները.

Պարտադիր օբյեկտիվ հատկանիշ է հանցանքի կատարման եղանակը: Օրենքը նախատեսում է համակարգչային հափշտակության կատարման հետևյալ եղանակները՝

1) համակարգչային տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության՝

ա) մուտքագրելը՝ տվյալը ներմուծելը,

բ) փոփոխելը՝ սկզբնական տեսքը մոդիֆիկացնելը, ինչը դժվարություն է առաջացնում դրա օգտագործման համար,

գ) ոչնչացնելը՝ այնպիսի վիճակի հասցնելը, որն անհնար է դարձնում տվյալի նույնացումը կամ ըստ նպատակային նշանակության օգտագործումը,

դ) ուղեփակելը (մեկուսացնելը)՝ անհասանելի դարձնելը, ինչը հնարավորություն չի տալիս այն օգտագործել,

2) համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործելը, օրինակ՝ տվյալն աղավաղելը[5]:

Քրեական գործերի՝ մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները հավաստում են, որ հափշտակության ամենատարածված եղանակը համակարգչային տվյալը մուտքագրելն է:

Վերը թվարկված եղանակներով համակարգչային հափշտակությունը տարբերվում է հափշտակության մյուս տեսակներից, ինչը ևս պետք է հաշվի առնել կանխարգելիչ միջոցառումների ընտրության և մարտավարության որոշման գործընթացում:

Բացի դրանից՝ եղանակներն ունեն նաև քրեաբանական հետևյալ նշանակությունը. համակարգչային հափշտակության եղանակները յուրահատուկ դրսևորումներ են ունենում քրեաբանական տարբեր իրադրություններում, որոնց իմացությունը պետք է դրվի խնդրո առարկա հանցատեսակների հատուկ և զոհաբանական կանխարգելման կազմակերպման գործընթացի հիմքում:

Քրեական գործերի՝ մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տվել բացահայտել համակարգչային հափշտակությունների կատարման հետևյալ եղանակները և դրանց դրսևորման քրեաբանական իրադրությունները.

1. Խաբեությունը.

Խաբեությունը դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելն է՝ կոնկրետ փաստերը ձևախեղելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել (Օրենսգրքի հոդված 3, մաս 1, կետ 11):

Խաբեության միջոցով հանցավորը.

1) Հասանելիություն է ստանում տուժողի «Իդրամ» դրամապանակին, ինչը, որպես կանոն, կատարվում է ստորև նկարագրված լայն տարածում ունեցող եղանակով:

Հանցավորը, որը հաճախ քրեակատարողական հիմնարկի կալանավոր է, «Viber» և «WhatsApp» հավելվածներով զանգահարում է տարբեր անձանց՝ հայտնելով, թե իբր սխալմամբ գումար է փոխանցել նրանց «Իդրամ» դրամապանակներին և խնդրում տրամադրել

[5] Տես *Իսրայելյան Գ. Վ.*, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2024, հատոր 3, էջեր 158-159:

նրանց հեռախոսահամարներին ստացված գաղտնաբառերը: Դրանք ձեռք բերելուց հետո նա հասանելիություն է ստանում տուժողների «Իդրամ» դրամապանակներին և, համապատասխան տվյալը մուտքագրելով, նրանց անունից կնքում է վարկային պայմանագրեր:

2) Հասանելիություն է ստանում տուժողի բանկային քարտի տվյալներին՝ հետևյալ եղանակներով.

ա) «WhatsApp» հավելվածի միջոցով կապ է հաստատում քաղաքացու հետ՝ «List.am» կայքում տեղադրված նրա հայտարարության տվյալներով: Գումար փոխանցելու պատրվակով հանցավորն ուղարկում է «Հայ Փոստի» հղում, որտեղ տուժողը լրացնում է իր բանկային քարտի տվյալները, ինչից հետո անհայտ անձը հափշտակում է քարտին առկա գումարը:

բ) «WhatsApp» հավելվածով կամ բանկի տարբերանշանով այլ բջջային հավելվածով կամ բանկի հեռախոսահամարով քաղաքացու հետ կապ հաստատած անձը ներկայանում է որպես տվյալ բանկի աշխատակից, հավելվածի անվտանգությունն ապահովելու պատրվակով խաբեությամբ տիրանում է տուժողի բանկային քարտի տվյալներին և հաշվեհամարից կանխիկացնում գումար կամ առցանց վարկ ձևակերպում:

3) Հասանելիություն է ստանում տուժողի գումարին՝ հետևյալ եղանակներով.

ա) «Facebook» կամ «Instagram» սոցիալական կայքով ներկայանում է որևէ կազմակերպության, օրինակ՝ «Գազպրոմ» ընկերության մենեջեր կամ ֆինանսական խորհրդատու, ներդրումային կեղծ կայքերում ներդրում կատարելու և եկամուտը հետ փոխանցելու պատրվակով տուժողից պահանջում և փոխանցման միջոցով ստանում է գումար, սակայն փոխանցելուց հետո խաբեությամբ հափշտակում է այն:

բ) «Facebook.com» սոցիալական ցանցում, տուժողի՝ արտերկրում, որպես կանոն, ԱՄՆ-ում կամ ՌԴ-ում գտնվող ընկերոջ անունով և նկարներով ֆեյսբուքյան էջ է բացում ու խաբեությամբ տիրանում որպես օգնություն տուժողի կողմից «Թել-Սել» հավելվածով կամ այլ էլեկտրոնային եղանակով փոխանցված գումարին:

2. Վստահությունը չարաշահելը.

Վստահությունը չարաշահելը որոշակի վարքագծով, խոստումներով կամ հանցագործությունից տուժածի հետ ունեցած միջանձնային հարաբերություններն օգտագործելով՝ հանցավորի կամ այլ անձի ապագա վարքագծի կամ ապագայում սպասվող փաստերի կամ իրադարձությունների կապակցությամբ անձին դիտավորությամբ մոլորության մեջ գցելն է (Օրենսգրքի հոդված 3, մաս 1, կետ 12):

Վստահությունը չարաշահելու օրինակ կարող են ծառայել հետևյալ դեպքերը.

ա) Ա.-ն ու Բ-ն գտնվել են փաստական ամուսնական հարաբերությունների մեջ: Բ.-ն վստահել է Ա.-ին քարտային հաշվի գաղտնաբառը, ով կատարել Բ.-ի դրամական միջոցների հափշտակություն և անհետացել:

բ) Պատիժը կրելու ընթացքում գումար հափշտակելու դիտավորությամբ քրեակատարողական հիմնարկից՝ իր կողմից ապօրինի օգտագործվող բջջային հեռախոսների միջոցով ստանալով համացանցի հասանելիություն՝ հանցավորը մուտք է գործում «Odnoklasniki.ru» կայք, որտեղ, բացելով անհատական էջ, ծանոթանում է տուժողի հետ, նրա հետ ստեղծում կեղծ մտերմիկ հարաբերություններ: Հետագայում, տուժողի վստահությունը չարաշահելու եղանակով՝ հանցավորը նրանից պահանջում է բանկային քարտի թվային տվյալները, որոնց միջոցով կատարում է դրամական միջոցների հափշտակություն[6]:

[6] Տես *Իսրայելյան Գ.*, Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2024, 4-6 (298-300), էջ 44, *Իսրայելյան Գ.*, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով

4. Համակարգչային հափշտակության միջոցները.

Պարտադիր օբյեկտիվ հատկանիշ է նաև հանցանքի կատարման միջոցը: Վերը նկարագրված գործողությունները կարող են կատարվել ինչպես համակարգչով, այնպես էլ սմարթֆոնով կամ ցանկացած հաշվողական տեխնիկայի օգտագործմամբ: Էլեկտրոնային կամ համակարգչային տեղեկատվությունը կարող է ներմուծվել ինչպես կոնկրետ սարքի, օրինակ՝ բանկոմատի, այնպես էլ համացանցի միջոցով, հափշտակությունները կարող են կատարվել տարբեր էլեկտրոնային հաշիվներից, այդ թվում՝ կարող է հափշտակվել կրիպտոարժույթ[7]: Այս հատկանիշի քրեաբանական նշանակությունն այն է, որ միջոցի տեսակով է պայմանավորված կանխարգելիչ միջոցառումների և մարտավարության տարբերակի ընտրությունը:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս ձևակերպելու հետևյալ եզրահանգումները.

1. Օբյեկտով և առարկայով համակարգչային հափշտակությունը տարբերվում է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից: Ուստի իրավական պաշտպանության տակ գտնվող հարաբերությունների բնույթով և հանցավոր ոտնձգության առարկայով է որոշվում թվարկված հանցատեսակների կանխարգելիչ միջոցառումների տարբերակվածությունը:

2. Հանցավոր գործունեության տարբեր փուլերում կանխարգելիչ միջոցառումները պետք է իրականացվեն տարբերակված: Այսպես, հանցանքի նախապատրաստության փուլում կարող են արդյունավետ լինել համոզման, իսկ հանցափորձի փուլում՝ հարկադրանքի միջոցները: Շարունակվող հանցանքի պարագայում, երբ կատարվել է միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքների մի մասը, մյուս մասերի կանխարգելման գործում կիրառելի են ինչպես համոզման, այնպես էլ հարկադրանքի միջոցները:

3. Համակարգչային հափշտակությունը կարող է կատարվել օրենքով նկարագրված միայն իրեն բնորոշ եղանակներով: Համակարգչային հափշտակության ամենատարածված եղանակը համակարգչային տվյալը մուտքագրելն է:

Կատարման եղանակներով համակարգչային հափշտակությունը տարբերվում է հափշտակության մյուս տեսակներից, ինչը ևս պայմանավորում է կանխարգելիչ միջոցառումների առանձնահատկությունները: Բացի դրանից՝ եղանակներն ունեն նաև քրեաբանական հետևյալ նշանակությունը. համակարգչային հափշտակության եղանակները յուրահատուկ դրսևորումներ են ունենում քրեաբանական տարբեր իրադրություններում, որոնց իմացությունը պետք է դրվի համակարգչային հափշտակությունների հատուկ և զոհաբանական կանխարգելման կազմակերպման գործընթացի հիմքում:

4. Համակարգչային հափշտակությունը կատարվում է որոշակի միջոցներով՝ համակարգչով, սմարթֆոնով կամ ցանկացած հաշվողական տեխնիկայով: Այս օբյեկտիվ հատկանիշի քրեաբանական նշանակությունն այն է, որ միջոցի տեսակով է պայմանավորված կանխարգելիչ միջոցառումների և մարտավարության տարբերակի ընտրությունը:

կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմները և կանխարգելման միջոցները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2024, 7-9 (301-303), էջեր 86-87:

[7] Տես ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց / Ա. Գաբուզյան և այլք: ԵԽ, Երևան, 2022, // https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57 (վերջին մուտք՝ 07.04.2025թ.):

Ամփոփագիր: Իրականության մեջ առանձին հանցատեսակների օբյեկտիվ հատկանիշների դրսևորման քրեաբանական նշանակությունը պայմանավորված է կանխարգելիչ միջոցառումների մարտավարության և առանձնահատկությունների որոշման հնարավորությամբ: Սա հատկապես վառ է արտահայտված համակարգչային հափշտակության պարագայում:

Վերլուծելով օբյեկտը և առարկան՝ հեղինակը նշում է, որ այդ հատկանիշներով համակարգչային հափշտակությունը տարբերվում է համակարգչային համակարգի և համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից, ուստի դրանցով է որոշվում թվարկված հանցատեսակների կանխարգելիչ միջոցառումների տարբերակվածությունը:

Անդրադառնալով հանցավոր գործունեության փուլերին՝ հեղինակը շեշտում է, որ հանցանքի նախապատրաստության փուլում կարող են արդյունավետ լինել համոզման, հանցափորձի փուլում՝ հարկադրանքի միջոցները, իսկ շարունակվող հանցանքի պարագայում, երբ կատարվել է միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքների մի մասը, մյուս մասերի կանխարգելման գործում կիրառելի են ինչպես համոզման, այնպես էլ հարկադրանքի միջոցները:

Վերլուծելով համակարգչային հափշտակության եղանակները՝ հեղինակը հավաստում է, որ դրանցով խնդրո առարկա հանցանքը տարբերվում է հափշտակության մյուս տեսակներից, ինչն իր հերթին կանխարգելիչ միջոցների տարբերակված իրականացման հիմք է: Բացի դրանից՝ համակարգչային հափշտակության եղանակներն իրենց դրսևորումն են գտնում քրեաբանական կոնկրետ իրադրություններում, որոնք վերլուծվել են հեղինակի կողմից: Վերջինիս կարծիքով՝ նշված իրադրությունների իմացությունը պետք է դրվի վերոգրյալ հանցատեսակի կանխարգելման կազմակերպման հիմքում:

Բացահայտելով համակարգչային հափշտակության միջոցների նկարագիրը՝ հեղինակը նշում է, որ օբյեկտիվ այդ հատկանիշի տեսակով է պայմանավորված կանխարգելիչ միջոցառումների և մարտավարության տարբերակի ընտրությունը:

Annotation. The criminological significance of the manifestation in reality of objective signs of certain types of crimes is due to the possibility of determining tactics and features of preventive measures. This is especially pronounced in relation to computer theft.

Analyzing the object and predicate of the crime, the author notes that these signs distinguish computer theft from crimes against the security of a computer system and computer data, and therefore determine the differentiation of preventive measures for these types of crimes.

Turning to the stages of criminal activity, the author emphasizes that persuasion can be effective at the stage of preparation of a crime, coercion at the stage of an attempt, and in the case of an ongoing crime, when some of the acts included in the general intent have already been committed, both persuasion and coercion can be used to prevent the remaining episodes.

Analyzing the methods of committing computer theft, the author argues that the crime in question differs from other types of theft in the ways it is committed, which in turn is the basis for the differentiated implementation of preventive measures. In addition, the methods of computer theft find their manifestation in specific criminological situations, which were analyzed by the author. Knowledge of these situations should be the basis for organizing the prevention of this crime.

Revealing the characteristics of the means of computer theft, the author notes that the choice of preventive measures and tactics is determined by the type of means.

Аннотация. Криминологическое значение проявления в реальности объективных признаков отдельных видов преступлений обусловлено возможностью определения тактики и особенностей мер предупреждения. Особенно ярко это выражено относительно компьютерного хищения.

Анализируя объект и предмет преступления, автор отмечает, что данные признаки отличают компьютерное хищение от преступлений против безопасности компьютерной системы и компьютерных данных, а потому обуславливают дифференциацию профилактических мер перечисленных видов преступлений.

Обращаясь к стадиям преступной деятельности, автор подчеркивает, что убеждение может быть эффективным на стадии подготовки преступления, принуждение – на стадии покушения, а в случае продолжающегося преступления, когда некоторые из деяний, входящих в общий умысел, уже совершены, для предупреждения остальных эпизодов могут применяться меры как убеждения, так и принуждения.

Анализируя способы совершения компьютерного хищения, автор утверждает, что рассматриваемое преступление отличается от других видов хищений способами совершения, что в свою очередь является основанием для дифференцированного осуществления предупредительных мер. Кроме того, способы компьютерного хищения находят свое проявление в конкретных криминологических ситуациях, которые были проанализированы автором. По мнению автора, знание указанных ситуаций должно быть положено в основу организации предупреждения указанного преступления.

Раскрывая характеристику средств компьютерного хищения, автор отмечает, что выбор предупредительных мер и тактики определяется видом указанного объективного признака.

Բանալի բառեր - համակարգչային հափշտակություն, իրավաբանական կազմ, օբյեկտիվ հատկանիշներ, քրեաբանական նշանակություն:

Keywords: computer theft, legal structure, objective signs, criminological significance.

Ключевые слова: *компьютерное хищение, юридический состав, объективные признаки, криминологическое значение.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Իսրայելյան Գ., Համակարգչային հափշտակության ընդհանուր զոհաբանական կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2024, 4-6 (298-300), էջեր 41-48:

2. Իսրայելյան Գ. Վ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2023: Հատոր 2. – 240 էջ:

3. Իսրայելյան Գ. Վ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Մեկնաբանություններ / Գ. Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2024: Հատոր 3. – 300 էջ:

4. Իսրայելյան Գ., Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով կատարվող հափշտակությունների տիպային մեխանիզմները և կանխարգելման միջոցները Հայաստանի Հանրապետությունում // Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2024, 7-9 (301-303), էջեր 85-91:

5. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). / Եր.: ԵՊՀ հրատ., 2012. – 1044 էջ:

6. ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց / Ա. Գաբուզյան և այլք: ԵԽ, Երևան, 2022, // https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57:

7. Шапошников А. А. Криминологическая характеристика личности киберпреступника // https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-kiberprestupnika-1/viewer:

Իսրայելյան Գ. - ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, էլհասցե՝ gevorgisrayelyan79@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 22.05.2025 թ., տրվել է գրախոսության 22.05.2025թ., երաշխավորվել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Խեչոյանի կողմից, ընդունվել է տպագրության 01.10.2025 թ.: